



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԲԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԲԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻԻ 100

21 ՅՈՒՆԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի 21 Յունիս 1913 Թիւ 100

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մատթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բաթական Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարէ, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտղ քունաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն արտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթող. Մէրի Օէլ Վալի, սու Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅԵՐ ԵՒ ԼՈՍՏԱՆԴՐԱՆՈՍ

(Շար.)

7. Ազաթանգեղոս կը կեղծէ Տրդատայ ըբար-
տուղար եղած ըլլալ և Հռոմայեցի: Սակայն
մատենանին յօրինուածութեան ներքին քնն-
նութենէն կը տեսնուի որ հեղինակը բաւա-
կան վերջը յօրինած է այդ գիրքը, առջեւն
ունենալով մէկէ աւելի վաւերական գրու-
թիւններ, Տրդատայ և Ս. Դրիգորի պատ-
մութիւն, Հռիփսիմեանց վկայաբանութիւն,
ևն., հայ կամ ասորի կամ նոյն իսկ յոյն
լեզուով խմբագրուած: Այս տեսակ կեղծիք-
այն ժամանակները, արեւելքի մէջ մա-
նաւանդ, սովորութիւն մըն էր, այժմու
գրագէտներու շատերուն կեղծանուն մը առ-

նելուն նման. կը կարծուէր թէ ասանկով
աւելի մեծ ճոխութեան և ճշմարտախօսու-
թեան փաստ մը տրուած կ'ըլլայ: Այսու հան-
դերձ, ըստ խիստ քննադատութեան սկըզ-
բանց, Ազաթանգեղոս իր պատմած դէպքե-
րէն շատ հեռի չէ ժամանակաւ. ամենալուրջ
և ամենէն հեղինակաւոր քննադատներ, ինչ-
պէս Դաթիւրճեան*, Տաշեան** կը դնեն զին-
քը շատ շատ ի վերջ կոյս չորրորդ դարու,
կամ հինգերորդի առաջին կիսուն մէջ: Տըր-
դատ կը վախճանէր չորրորդ դարուն կէսին
մօտ (չուրջ 338ին). և Դրիգոր Հայրապետ առ
Աստուած փոխուած էր անկէ քանի մը տարի
առաջ միայն (333): Թարմ էր ուրեմն ա-
ւանդութիւնը. դեռ կենդանի էին շատեր որ
այս նշանաւոր սուրբերը տեսած, անոնց հետ

* Տիեզ. պատմ. Բ. 476:

** Ազաթ. էջ 87:

խօսած և անոնցմէ լսած էին, այսինքն՝ ա-
կանատես և ականջալուր վկաներ, կամ այն-
պիսեաց մերձաւոր ժամանակակից էին: Ո՛ր-
քան հաստատուն էր ասոնց ամէնուն վկա-
յութիւնը, նոյնքան անհնար էր որ նորա-
գոյն հեղինակ մը խաբէ գիրենք: Միաբերան
պիտի աղաղակէին թէ այդ պատմութիւնը
սուտ է, յերիւրուած է: Ուստի յայտնի է թէ
տուեալ պարագայից մէջ, Ագաթանգեղոս չէր
կրնար աղդ մը խաբել, գոնէ էական կէտե-
րու նկատմամբ:

8. Այս տեսակ՝ խաբէութեան մը անկա-
րելիութիւնը բացայայտ կ'ըլլայ եթէ միան-
գամ ի նկատի առնուի թէ Ագաթանգեղոսի
ժամանակ արդէն ազգին զարթնումը սկսած
էր հսկայաքայլ յառաջադիմել. անմիջապէս
վերջը կու գայ կամ նոյն իսկ ժամանակակից
է Ոսկեղարը, յորում ծաղկեցան ականաւոր
գիտնականներ, հոյակապ մատենագիրներ:
Կրցա՛ւ ուրեմն Ագաթանգեղոս մը խաբել
ազգը, արքունիքը և մանաւանդ ամենէն
ուսեալ տարրը, գիտուններու բոլոր դասա-
կարգը. յիրաւի անտեղի և անարգական են-
թադրութիւն: Սահակներ, Մեսրոպներ, Եզ-
նիկներ, Կորիւններ, Փարպեցիներ, Նղիշէ-
ներ, Լեն. Լեն. միահամուռ խաբուած... և
անոնցմէ վերջը անթիւ անհամար մեծամեծ
հեղինակներ, որպիսիք են՝ Յովհան Կաթողի-
կոս, Ասողիկ, Շնորհալի, Դրիգոր Տղայ, Վա-
նական Վ., Վարդան Վ., Գանձակեցի և այլ
բազումք, Ճառնատիրք, Յայտաւուրք, և
վերջին դարերու յոյն և լատին հեղինակներ,
ամէնքը խաբուած... մինչեւ իսկ Տաթեւա-
ցին, — յայտ մասին ո՛չ-կասկածելի — որ
բացարձակապէս կ'ընդունի թէ Դրիգոր Ի
Հռոմ գնացեալ եղել Հայրապետ: Անհնարին
է որ ասոնք ամէնքը խաբուած ըլլան: Ա-
սոնք ամէնքը գիտէին և ընդունած էին աս
գէպքերը իբր սօուզութիւն. ուրեմն Ագա-
թանգեղոս, գոնէ յեականին ստիպուած էր
պատմել իրական դեպք մը:

9. Ագաթանգեղոսի՝ գոնէ յէական, ճշ-
մարտախօսութիւնը կը հարկադրուին ընդու-
նիլ յուրջ քննադատներն առ հասարակ: Զայս
կը հաստատէ անոր զլխաւոր մասերուն մէջ

միւս պատմաբաններու հետ համաձայնու-
թիւնը: Մանր տեղեկութեանց ճշգրտեանը
երաւխաւորութիւն մըն ալ է միաբանութիւ-
նը ուրիշ հայ մատենագրաց հետ... ճշդիւ
միաբան են... եւ զիրար փոփոխակի կը
լրացնեն ու կը հաստատեն*: Մինք հոս միայն
ենթադրելով կ'անցնինք այն եզրակացու-
թիւնները, որոնց՝ յայտ մասին, կը յանգին
քննադատներու խուզարկութիւնները: Ըն-
դունուած է թէ որքան ալ Ագաթանգեղոս
Հինգերորդ դարու մէջ խմբագրուած է, սա-
կայն 1. նա ունէր նախկին և հնագոյն խմ-
բագրութիւն մը, և եղած է մէկը որ այս
գրքին վերջին ձեւ մը տուած է. երկրորդ
խմբագրողը եղած է անոր**: 2. Ագաթանգե-
ղոս առջեւն ունեցեր է պատմական և վկա-
յաբանական գրութիւններ, ժամանակակից՝
պատմուած գէպքերուն. Կրկնած է նա միայն
Ե. դարու մեջ Հայոց ծանօթ կարծիք: 3.
Շատ տեղեր, օր. հ. Գրիգորի մանկութեան
վրայ, Դ. և Ե. դարերու մէջ Հայոց նու-
րապետութեան վրայ Լեն., բոլորովին պատ-
մական ստուգութիւն ունի, վկայ ունենա-
լով այլ եւ այլ աւանդութիւնները***: 4. Ա-
գաթանգեղոսի Բ. գիրքը՝ առ հասարակ,
ինքնին երաշխաւոր է իւր վաւերականու-
թեան: Հայոց դարձին, քարոզութեան, մը-
կերտութեան, և այլ պարագայից վրայ զորս
կը պատմէ Ագաթանգեղոս, երկբայել չենք
կրնար. յաջորդ դարուն բովանդակ հայ պատ-
մութիւնը երաւխաւոր է այս կէտերուն****: 5. Աթանգեղոսի նկատմամբ ալ Ագաթան-
գեղոս հայկական հին աւանդութեան հետե-
ւած է, ուստի եւ ընդունելի*****: Ագաթան-
գեղոս մանրամասն կը պատմէ Հայոց դար-
ձը, եպիսկոպոսաց եւ քահանայից գրուիլը
բովանդակ Հայոց մեջ. Արիսակեսի յաջորդ
կարգուիլը, Եւն. Եւն., որոնց վրայ պէտք չի
մնար խօսելու եւ հաստատելու թէ վաւերա-
կան պատմութիւն են. քեզի տեղ տեղ կը գրե-

* Տաշեան, Ագաթ. էջ 450.

** Անգ. էջ 110—112.

*** Անգ. էջ 140.

**** Անգ. էջ 144.

***** Անգ. էջ 143.

նուին չափազանցութիւնք եւ անճշդութիւնք*։ Շեշտելով Ագաթանգեղոսի համաձայնութիւնը Բուզանդայ եւ ուրիշ պատմագիրներու հետ, պէտք է եզրակացնել թէ՛ Նոյնպիսի եւս նմանութիւնք եւ միաբանութիւնք կը ցուցնեն թէ՛ ո՛րչափ մեծ յարգ ունին Ագաթանգեղոսի այս մանր տեղեկութիւնները, եւ զայն իբր բոլորովին վստահելի աղբիւր մեր առջեւ կը դնեն...։ Իսկ Բ. գիրքը եւս աւելի պատմական եւ բոլորովին վստահելի աղբիւր է **։

10. Բայց մեզի համար այժմեան քննադատներէն շատ աւելի հեղինակաւոր քննադատ կը սեպուին ամբողջ ազգ մը եւ անոր ամբողջ գիտական դասակարգը եւ անվկանդելի կը համարինք անոր միահամուռ վկայութիւնը, Արդ ասոնք ամէնքը, առանց բացառութեան, Ագաթանգեղոսի պատմած դէպքերը իբր ստոյգ եւ անկասկածելի, եւ զինքն ալ իբր ստուգապատում եւ անկեղծաւոր ընդունած են։ Այս եզրակացութեան վկայ է՝ ազգին համար՝ աւանդութիւնը, իսկ գիտնականաց համար բոլոր պատմիչները, ի հաստատութիւն մեր այս առաջարկին անհրաժեշտ կը դատենք բառացի վկայութիւններ յառաջ բերել միայն Դ. եւ Ե. դարերու ժամանակակից եւ անկասկած հեղինակներէն, ամէնէն վերջը նշանակելով նաեւ Մ. Խորենացին, որուն պատմութեան այս մասերը բնաւ տեղի չեն տար երկրայութեան։

Ահա մեր գլխաւոր հեղինակաց վկայութիւնները։

Ա. ԶԵՆՈՐ՝ մականունանեալն Գլակ, ազգաւ Ասորի, ի սկզբան անդ չորրորդ դարու, խնդրանօք Մ. Գրիգորի Լուսաւորչի՝ աշակերտեցաւ անոր երբ նա Ղեւոնդիոսէ ձեռնադրուած կը վերադառնար ի Հայս։ Մ. Գրիգոր՝ Զենորը առաջնորդ դրաւ Խննականն Վանուց Մ. Կարապետին ի Տարսն, որ եւ կոչուեցաւ նաեւ Գլակայ վանք։ Հրամանաւ Մ. Գրիգորի գրեց Զենոր իր կարճ պատմութիւնը։ Արդ այժմեան ձեւովը, Զենոր Գլակ իր այս պատմութեան այլեւայլ տեղերը կը

յիշէ Ս. Գրիգորի եւ Տրդատայ Հռովմերթաւը, այնքան բնական կերպով՝ ինչպէս միւս դէպքերը։

ա. Իսկ Եղիազար Եկեալ, ի նաճապարհին հանդիպեցաւ Սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ, եւ խնդացեալ յոյժ դարձաւ զկնի նոցա մինչեւ ի Հռոմ փաղափ։ Եւ անդ կացեալ բազում աւուրս... մեծաւ խնդութեամբ դարձան յաւիարհն Հայոց եւ Տրդատ անցեալ գնաց յաւիարհն իւր յԱրարատեան փաղափ։ Իսկ Ս. Գրիգոր մնաց ժամանակս ինչ ի Տարսն*։

բ. Բայց արդ աղաչեմ զեզ, զի հրամայեցես միում ի պատօնեկցոյ քո՝ մեզ գրով առաքել զգրուցատրութիւն ձերում նաճապարհորդութեան. եւ զերկրորդ գալն ի Հռոմայ**։

գ. Այս առաջին պահէ եղաւ յաւուրս Սրբոյն Գրիգորի, զոր ի Հռոմ Սեղբեստրոս հաւանեցաւ, եւ պահեաց ինքն եւ Կոստանդիանոս քաղաւորն***։

դ. Ի ժամանակս յայնոսիկ լուր եհաս ի դուռն արքայի՝ թէ Կոստանդիանոս Կայսրն հաւատաց ի Քրիստոս Աստուած, եւ դադարեցոյց զհալածումն եկեղեցեաց, փաշութեամբ կալեալ զքաղաւորութիւն։ Ապա խորհուրդ ի մեջ առեալ՝ գնալ ի դուռն Կայսեր վասն դնելոյ դաւիթն խաղաղութեան ի միջի իւրեանց, եկին հասին ի գաւառն Ապահունեաց ի փաղափագեղն Մանձկեթ։... Եւ ինքեանք յառաջացեալ գնացին, բազում աւուրց օրեւանօք գանց առնէին, մինչեւ հասին ի Հռոմ փաղափ. եւ անդ կացեալ սակաւ աւուրս, դարձան մեծաւոք պատուով****։

Բ. ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴԱՅԻՐ, որ Ագաթանգեղոսի պատմութեան շարունակողը (337—389) եւ ամենահին պատմիչներէն մէկը եւ իր պատմած դէպքերուն շատերուն ժամանակակից եւ այլոց գրեթէ ժամանակակից է, կը պատմէ թէ երբ Տիրան Թագաւոր բռն-

* Զենոր, Պատմ. Բ. էջ 14. Տպ. Վենետ. 1889։

** Անդ, էջ 17։

*** Անդ, էջ 23։

**** Անդ, Պատմ. Բ. էջ 40, 43։

* Անդ, էջ 145։

** Անդ, էջ 156։

նուեցաւ Պարսիկներէ, Հայերը նեղը մտած պատգամաւոր շրկեցին Կոստանդիանոս Մեծին որդւոյն, Կոստանդիոս կայսեր (336—361) որ իրենց օգնէ և իրենց վրայ թագաւոր մը պսակէ: Ղրկեցին պատգամաւոր Առքաւորն Յունաց, զի ի նա ձեռն տուեալ ծառայեցեն նմա հնազանդութեամբ, եւ լինիցի նա քիկունք օգնականութեան... որք երբեալ հասեալ էին յաւարհն Յունաց ի կայսերական պաղատն քաղաւորացն:.. Զոր իբրեւ լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով եւ բազում պատգամութեամբ ի խնդիր ելանէր իրին հասելոյ: Կոստանդիոս Կայսր՝ Օգնական եւ քիկունք լինէր աւխարհին Հայոց: Մանաւանդ զի զուխսն յիշեալ զղաւթնցն կռիւց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ Կայսերն Կոստանդիանոսի եւ ի մէջ քաղաւորին Հայոց՝ Տրդատայ եղեալ էր*:

Արշակ թագաւորը նոյնպէս պատգամաւոր կը շրկէ առ Վաղէս Կայսր. Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաւանն որ էր աւխարհին Հայոց ընդ կայսրն Յունաց. դեպ եղեւ առաքել անդր կազմութեամբ մեծաւ արեային Հայոց զի ինքնին մեծ կարողիկոսն Հայոց (Ներսէս) երբիցէ ի մէջ Կայսերն եւ ի մէջ իւրեանց զուխսն հաւանութեան եւ խաղաղութեան նորոգեցցեն**:

Յայտնի է թէ ուխտ և դաշինք որ պիտի նորոգուէին, Տրդատայ և Կոստանդիանոսի կռած հին դաշինքն էր: Եւ որովհետեւ Կաթողիկոս մը միջնորդ կ'ըլլայ այս նորոգման, ուստի վերի կտորին մէջ եղող միջնորդութեան բառը, որ անիմանալի կը մնայ, հաւանականաբար կը նշանակէ միջնորդութեամբ Գրիգորի Հայրապետի:

(Շարունակելի)

* Փ. Բիւզ. Դպր. Դ. Գլ. ԻԱ, էջ 55. Տպ. Վե. նեա. 1879.

** Անդ. Դպր. Դ. էջ 84.

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ՅԱՆՆԵԼՈՒԹՅՈՒՆ Գ.

ԽՆՔՆԱԳԻՐ ՈՂՐ ՏԵՆԱՂԷ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՔԱՅԱՆԱՅԻ
ՔԷՕՄԻՐԺԵԱՆՑ ԶՈՐ ԳՐԵԱՑ ՄԻՆՉ Ի ԹԱԿՍՏԵԱՆ ԷՐ
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՆՈՒՄԱՆԱՅ

Կողկողագին դիմօք զԱզգն իմ աւաղեմ,
Եւ փղծկեալ ի սրէս՝ լալով արատուեմ.
Ջազնուութիւն Ազգիս իմ յիշեմ,
Ոչ հանդուրժեալ սրէս՝ լալով արատուեմ,
Արատուեմ, արատուեմ, լալով արատուեմ:

Արդ ո՛ր եմ մեր իշխանք կամ ո՛ր երեւին,
Ո՛ր նոցա Տէրութիւնն որ ոչ երեւին.
Քանզի քողին զմեզ՝ որք եւ լալագին,
Վասն այն ողբամ լալով եւ յորդ արատուեմ:

Քանզի եղեալ գերի մե՛ք՝ օտար ազգաց,
Ծաղր եւ արհամարհանք՝ մէջ համայն ազգաց.
Յամօք եւ նախաքինք՝ մեր բարեկամաց:

Վասն այն ողբամ եւն.:

Վասն մեղաց մերոց՝ եղեալ տարագիր,
Տարաբարհիկ եղեալ՝ ի յօտար երկիր,
Թափառական քոյիմք՝ իբր զցան եւ զցիր,
Վասն այն ողբամ եւն.:

Զարթի՛ր երեւիս, եւ ողբս յօրինէ,
Արատուօք ողբա՛ւ եւ զմեզ աւաղէ,
Զի կորովի Ազգն մեր՝ ողբոց արժան է,
Վասն այն ողբամ եւն.:

Ա՛ն ընդ քեզ ողբակից՝ մեր խաւարացին,
Լե՛ր լալակից նմա՝ ողբով դառնագին,
Աւա՛ղ ափսոս կարդա՛ւ մեր Հայոց Ազգին,
Վասն այն ողբամ եւն.:

Լալականաց զպարս աստուօք կոչեա՛ւ,
Զքուառութիւն Ազգիս նոօք դու ողբա՛ւ,
Թէ յորայիս արանց գրկեալ իցէ օա.
Վասն այն ողբամ եւն.:

Սա՛ղ աւխասանաց մեր Լուսաւորչին,
Զդաւիթն նոցա քակեալ քանդեցին,
Եւ ամենայն ազգաց ասելի ցուցին.
Վասն այն ողբամ եւն.:

Քանզի եղեալ ծանակ ի մէջ ասելեաց,
Ծաղր եւ արհամարհանք՝ ի մէջ դրացեաց,
Ամօք եւ նախաքինք՝ մեր բարեկամաց.
Վասն այն ողբամ եւն.:

Քանզի ի մէջ Ազգաց անուանի էաք,
Քան զազնիւ ակունս՝ լուսափայլ էաք,
Այսօր վասն մեղաց մերոց՝ յոյժ եզեղացաք.
Վասն այն ողբամ եւն.:

Իբրեւ զսիրամարգս՝ միտս ճեմեաք,
Պերնացեալ ի փառս՝ մեր զուարեանայաք,
Այսօր յամենայնէ յոյժ քափուրացաք,
Վասն այն ողբամ եւն.:

Որպէս ծառս պտղով՝ զարդարեալ էաք,
Եւ զայն Տեառն Աստուծոյ մասնացանէաք,
Այսօր յամենայնէ մեք քափուր գաք,
Վասն այն ողբամ եւն.:

Քանզի բարձաւ ի մէջ՝ խոհականութիւն,
Ոչ գօանի ի մեզ՝ խոհեմ իմասուն,
Ո՛չ այր խորհրդական, ո՛չ ծեր իմասուն,
Վասն այն ողբամ եւն.:

Զգինի յիմարութեան համայն մեք արբաք,
Զպատիւրանսն սիրոյ բնաւ մոռացաք,
Եւ իսակալութեամբ զիրեարս մասնեցաք.
Վասն այն ողբամ եւն.:

Կեղծաւորեալ դիմօք՝ զսէր սոս գուցաք,
Եւ ասելով զմիմեանս ասելի դարձաք,
Մերոյ Լուսաւորչին ուխտին ստեցաք.
Վասն այն ողբամ եւն.:

Խռովութեանց բանից՝ ունկնդիր եղաք,
Եւ խոհեմից արանց բնաւ ոչ լուաք,
Զխրատս իմաստնոց արհամարհեցաք.
Վասն այն ողբամ եւն.:

Գոհնիկք եւ անպիտան՝ Ազգիս սիրեցին,
Եւ զարս ազնուականս զգեսնի հարին,
Այնու զօրէն մեր աղաւաղեցին.
Վասն այն ողբամ եւն.:

Տգեօք եւ սմարդիկք՝ քանանայացան,
Լիրքք եւ ամբարտաւանք զհարգս ստացան.
Եւ բանք Առաքելոյն ասանցօր լցան.
Վասն այն ողբամ եւն.:

Աւա՛ղ, ժամանակիս՝ յոր ժամանեցաք,
Եւ ափսոս մեր Ազգին ուր այսպէս տեսաք,
Քանզի այսօր հոգոյ հաւասարեցաք.
Վասն այն ողբամ եւն.:

Զոմանս ի բանս մասնեն, զոմանս տուգանեն,
Զոմանս յրաժծեմ առնեն, զոմանս կաւառեն,
Եւ զոմանս բռնութեամբ հաւատոյ հանեն.
Վասն այն ողբամ եւն.:

Տերն ասէ՛ յարիցէ ազգ յազգի վերայ,
Բայց Ազգն մեր յարեան միմեանց ի վերայ,

Եղբայր զեղբայր մասնեաց՝ զերեց Քանանայ,
Վասն այն ողբամ եւն.:

Համանգամայն բարձաւ անն աստուածային,
Ամօք եւ պատկառանք ի սրտից նոցին,
Եւ եղեն հաւասար՝ անասնոյ սեռին.
Վասն այն ողբամ եւն.:

Անուամբ Լուսաւորչին յարածամ պարծին,
Իբր օրինաց նորա վեժխնդիր լինին,
Եւ այնու զարտուղի՝ մոլորեալ մոլին,
Վասն այն ողբամ եւն.:

Ի մեր քուականին՝ հազար հարիւրին,
Յիսուն եւ հինգ թիւ նմա կցորդին,
Վասն աղէթի Ազգիս՝ բանք շարեալ հիւսին.
Վասն այն ողբամ եւն.:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Դ.

Հոս կը դնենք այն գեղեցիկ և նպատա-
կայարմար տաղը՝ զոր յօրինած է տաճկերէն
լեզուով ի պատիւ Տէր Կոմիտաս Քահանայի,
իրեն ժամանակակից և բոլոր անցուղարձե-
րու մանրամասնութիւններուն ականատես
վկայ Վահչի էֆ. ն զոր տպուած գտանք Կա-
րապետ վրդպ. Նազութեանի տպել տուած
Տէր Կոմիտասի կենսագրութեան Բ. տպա-
գրութեան մէջ:

—Դո՛ւս օյ մազլումին անրն քալէպ էք զանրն եա՛ Բապպ
Լուքթիլէ նիհան էլիէ կիւլ կիպի նանրն եա՛ Բապպ.
Նասիպ էլիէ նէմիսիլէ անրն իղանրն եա՛ Բապպ.
Էնլիլին զալպիլէ սամլաք անլի իմանրն եա՛ Բապպ.
Էնլ շազ օլտուն մէտուր էքմէ անրն սիւմէնիլին եա՛ Բապպ.
Իքի նիհանէ մէտուր էք անրն եարանրն եա՛ Բապպ.
Պու նէվի շէհիթին արքր շէհրէք ու շանրն եա՛ Բապպ.
Անրն շէճապք իլէ կէօսքէր ինանրն եա՛ Բապպ:

—Տէմէիլէր հիշ աւլա քիմ պունա րազի մի սիր Ալլահ.
Տէիլէր քի պօյնումուզա կէր պունիսա վար իսէ կիւնահ.
Զաքի բաքին հէօրմէքիլէ էքմէսին անլէրի շէրահ.
Սուլու Մանասքր բաքազը նիւլիլէսի գանլըր սր պիլլահ
Պիլէ մէյսան զալտուն սիլէ օլտուար ալէմէ իքրահ.
Նիքիլիլէն եօզ սր մէնալ գիւրա նիւլիլէ օլտուք ակեհահ.
Պու նէվի շէհիթին արքր շէհրէք ու շանրն եա՛ Բապպ.
Անրն շէճապք իլէ կէօսքէր ինանրն եա՛ Բապպ:

—Օլմայրնազ պիր ազ նէվիլէր չըզա՞րմը մէյսանէ ազուն
Օլմազսա եար պու զահրման պիլ շէ օլուր իսիֆ մահզուն

Օլմասա գազիյի մեծեմ գալուր իսի օ պէր գանուն.
Սանքի մեհեմ օլմայրնագ էլպէր պէլլի օլմագ ալթուն.
Անրն հէր պիր քէսպիրլէրի պիզի էլլէմիւ քիր մէմնուն:
Քիմքի սէպէպ օլթու իսէ էլլէ եա՛ Մէվլա սերնիկիուն:
Պու նէվի շէհիսին արթըր շէօհրէք ու շանրնր եա՛ Բապպ
Անրն շէմաաթը իլէ կէօսթէր իհսանրնր եա՛ Բապպ:

— Ելլէսիմ պէն օլ զանիսին բուուսիմէ քուննի իմալ.
Նէսէնիւ էլլէսէմ մէհիմ գուսրէթէն կէօրիւմիւս մէալ.
Տիլա՛, էկէր ազիլ իսէն պու իւլէրէն չօզ հիսսէ ալ.
Հիսսէմէն օլսունլար իլլէ կէօսթէրի լուրթիմի ճէլալ.
Պիր քիւի օլ լուրթէ եսէ, նէլլէր դայրաւ մալ ու մէլալ.

Ա՛հ քի պունուն քէսպիրիմէ հիւմէմք օլմուսըզ մէլեալ.
Պու նէվի շէհիսին արթըր շէօհրէք ու շանրնր եա՛ Բապպ,
Անրն շէմաաթը իլէ կէօսթէր իհսանրնր եա՛ Բապպ:

— Օլմուս իսիք քա էզէլէն անրն հիւնպիւիմէ մէլիլ,
Վա՛ր մի իսի պիր նօզսանի հաճըզ քէլամ իսի է՛յ քիլ.
Ճէլլի ալէ խաֆի զապրին իլլէյէ նուր իլէ սէպիլ.
Ասուլէրի կէօրիւպ օլսուն իսնէա իշրէ հէր շէմ գէլիլ,
Ֆազաթ ազըր էթի պիզի պուսէ պու բանէ շէլիլ.
Մախլէսիմիզ Վանչի շէնի միւլապրէ էլլէյէ ճէլիլ.
Պու նէվի շէհիսին արթըր շէօհրէք ու շանրնր եա՛ Բապպ,
Անրն շէմաաթը իլէ կէօսթէր իհսանրնր եա՛ Բապպ:

ՏՈՀՄԱՅԻՆ ՃԻՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԷՕՄԻԻՐՃԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ

Սարգիս Քէօմիւրնեանց

Նահապէս

Խորեն | Աւիսեն | Տ. Մարտիրոս | Սօֆիա | Դայիանէ
Քեննլ.

Երեսիա	Տ. Մարտիրոս † 1703	ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ 1656 — 1707	Իրենն
--------	-----------------------	----------------------------	-------

Տ. Գրիգոր. Տ. Վերդ

Սողոմէ	Հովիս.	Թարթիպաւ	Նահապէս	Յովն.	Մարիանն	Աղաւնի
--------	--------	----------	---------	-------	---------	--------

† Ի Հոռմ 1707

Պէտրոս	Կոմիտաս	Պողոս
† Ի Վիեն. 1772		† Ի Մէսիմ 1803
Ռոզա		Էլէնա. Յուլիանէ

Հովիս. Յովն. Յովս. Անն:

ՊՍԼԸԳ ԱՎԸ ԲԱՐԹԻՍԻ

Ձատիկ կիւնիւ սապահլայըն սաաթ սէ-
քիզտէ իքի քիչի եօլտա պիրպիրլէրինէ թէ-
սատիւֆ իտէրլէր :

— Վա՛յ, մաշալլահ, պօնօնու. Պու նէ՞
գատար էրքէն գալգմըշսըն :

— Պա՛գ ավա կիտիյօրըմ, իշթէ պաս-
թօնըմ. Օլթա վէ եէմ տէ չանթատա տըր :
Օ տէյիլ ամմա, սէն պու գատար էրքէն նի՛-
չին տիշարը չըգմըշսըն :

— Պէն տէ Պատարագա կիտիյօրըմ :

— Պատարագա՞ մը, սէ՛ն մի :

— Էլպէթթէ. գարըմ զօր իլէ պէնի Ձա-
տիկ կրթուլիւնընա եօլլատը. կիթմէսէյտիմ
էվտէ անէնկ պօզուլաճագտը : Բարոզիչ պէնի
բէք միւթէէսսիր էյլէտի... էօլիւմ... չէ-
րաաթ... թէվպէյէ կէլմէյէնլէր իչին ճէհէն-
նէմ... պուշլար պէնի օլտուգճա տիւշիւն-
տիւրտիլէր... Պատէհու գալգտըմ քէնտի-
սինի կէօրմէյէ կիթտիմ, խոստովանանք օլ-
մայա տէյիլ, սատէճէ պիր կէօրիւշմէյէ :

— Է՛յ, սանա նէ՞ տէտի պագալըմ :

— Պանա հիքեայէմի նագլ էթտիրտի,
դաթէն էվվէլլիւտէն պիլտիլի պիր հիքեայէ
իտի : Էլլէնմէգտէն էվվէլլէր ճէհալէթիմի...
ճանըմ, ատամ տէյիլ միսին... :

— Սէօզլէրինի նասըլ տինլէյօրտը :

— Օ գատար կիւզէլ տինլէյօրտը քի,
պէշ տագիդա միւքեալէմէտէն սօնրա, պանա
տէտի. «Ազիզիմ, սէն խոստովանանք օլ-
մագտան գօրգույօրսըն, ֆագաթ իշթէ խոս-
տովանանք օլտուշ պիթտի : Հայտէ տիզ չէօք
քի իւսթիւնտէն սիւնկէրի կէշիրէլիմ. իշ
պիթսին» :

— Սէն տէ տիզ չէօքտիւն մի :

Հիչ ասլա թէրէտտիւտ պիլէ էթմէտիմ.
Համտ օլտուշ չիմտի քեամիլէն թագէ վէ
եէնիյիմ :

Ձանն էտէրսին քի ալճը օլթասընը սուչա
աթըյօրտը, կէօզլէրինի իրիճէ աշարագ,

— Պէն սանա շաշըյօրում :

— Պանա շաշաճագընա, սէն տէ պէնիմ
կիպի եաբմալըյտըն, չիւնքի պէն չօգ մէմ-

նուշըմ : Եիրմի ալթը սէնէտէն պէրի քէօ-
բէք կիպի եաշատըգտան սօնրա, արթըզ
խրիսթիյան օլաճագ վագըթ կէլմիշտի :

Եէկտիկէրլէրինին էլլինի սըգըճա սըգտըգ-
տան սօնրա, այրըմագ իւզըէ իքէն :

— Շիմտի Պատարագ պաշլար, ատիէօ,
կիւլէ կիւլէ էյլէնէսին :

Ավճը էսքի արգատաշընըն պալսթիեար
պիր քիմսէ կիպի քէյֆլիճէ հիւրիւտիլիւնէ
պագարագ,

— Իշթէ սանա բաբագ էօքսէսինէ թու-
թուլանըն պիրի տահա : ին՛յը, պէն քէնտի
հիւրիլէթիմի թէրճիհ էյլէրիմ, տէր. վէ
խաթվէլէրինի թէսրի իտէրէք սթասիօն եօ-
լընը թութար :

*
* *

Պիր գաշ տագիդա սօնրա քրեկ տիւտիւ-
յիւնիւ չալըյօրտը :

Կիւնէշ էշիայը ղէրինթարընը նէշը վէ օ
կիւնիւն լաթիֆ օլաճագընը թէպշիր էյլէ-
յօրտը : Պիզիմ ալճը վակօնըն բէնճէրէսինտէն
թապիաթըն կիւզէլլիլինի սէյրէ տալմըշտը :

Մա մաֆիյհ, օվալարը ստէթա շալգըլա
իագա էյլէյէն պու կիւնէշ, օնուշ գալպինէ
նուֆուզ իտէմէյօրտը : Ձանն էտէրսին քի
պէնիլիտէ պիր չալբանիթը վար իտի. տօո-
թուլա օլան մուհալէրէ խաթըրնտան չըգ-
մայօրտը :

— Զէվալլը՛ ատէմ, օ արթըզ պէնիմ ի-
չին պիթմիշ տիր... խոստովանանք օլմագ
կիպի տիվանէլիք օլո՛ւր մը. ամմա քէնտի
ինանըյօր, նէ՞ տէյէպիլիրսին :

Եօլճու քէնտի քէնտիպինի ֆէրահ թութ-
մագ, ֆիքրինի պաշգա թարաֆա չէվլիւմէք
խաթէյօրտը, ֆագաթ գապիլ օլամայօրտը,
ֆիքրի տաիմա օնուշլա մէշղուլ պուլուշու-
յօրտը. հէլէ շու սէօզ ատէթա տուլմազար-
ղըն գուլագլարընտա աքսէնտագ օլույօրտը :
Սեկ սե պեկիմ կիպի եաբմալըյթըն, պեկ չօգ
մեմնուլըմ : Պու միւզիճ ֆիքրի իւսթիւնտէն
աթմագ իսթէրճէսինէ էլլինի ալնընա կէօ-
թիւրիւր :

— Բէնտիսինէ պէնպէմէ՞ք մի... պու՛նէ՛
պէտպալսթըզ : Եօ՛գ, կիտիպ տէ պիր բա-

բազ դարչըսընտա խոստովանանք օլամամ,
կիւնհարըմը իբրար էտէմէմ... խա'յր հիշ
պիր վազըթ, «վարդապետ, չէօյլէ եարտըմ,
պէօյլէ եարտըմ» տէյէմէմ. խա'յր, խոստո-
վանանք էրքէքլէր իշին տէյիլ տիր, դարը-
լարա եագըշըր:

Թէքրար պաշլար էթրաֆը թէմաշա էթ-
մէյէ:

— Պազաթ շու կիւզէլ թապիաթ քէնտիլի-
յինտէն օլամմըշ տըր... պիր Ալլահ վար տըր,
էյէր պիր Ալլահ վար իսէ, պու Ալլահ էլ-
պէթ պիր մէզհէպ գուրմուշ տըր... էյէր
մէզհէպ տէ վար իսէ, թապիի տիր քի ծոռն
իճրապընտա պուլլընմալը:

Սօնրա քէնտի քէնտինէ կէլէրէք,

— Պա'գ, պիլա ինթիյար պէն տէ բաբազ
ֆիֆրիլի օլույօրըմ. զանն իտէրսին քի պիր
մըգնաթըն շիմալի չէֆիյօր... ֆազաթ մըգնա-
թըն հիւր տէյիլ տիր, հալպու քի պէն հիւր
իմ. խա'յր, գապիլ տէյիլ տիր:

Թրէն օ գատար խըզը կիտիյօրտը քի,
ճիէթիստէքի էշճար վէ էզհար պիր պիրինէ
գարըշըպ կիպի կէօրիւնիւյօրտը:

— Եա շիմտի թրէն խաթթտան չըգաճազ
օլա... եա էօլսէմ, օ պիր թարաֆտա նէ
կէօրէճէյիմ աճէպա...:

Իւզէրինէ պիր սարալնթը կէլիր:

— Էվվէթ, նէ կէօրէճէյիմ, հիշ. հիշ մի.
խա'յր պու օլամազ, հիշ պիր շէյ կէօրմէմէք
գապիլ տէյիլ տիր... Ինթիմալ քի ճէհէնէմի
կէօրէճէյիմ:

Ֆիֆրինտէ վէ բարմազլարընըն իւզէրին-
տէ հիսապ իտէրէք,

— Եիրմի իքի սէնէլիք պինամուս պիր
էօմր:

Թրէն գօշույօրտը, ուշույօրտը, իշթէ պիր-
տէն պիրէ պիր սարալնթը տըր հիսս օլընալը:

Հը, նէ, աճէպա գազա'մի տըր: Մաազ
Ալլահ էյէր էօյլէ պիր շէյ օլուրսա...:

Թրէն տուրալ: Ավճը պիր սանիլէլիք թէ-
րէտսիւտտէն սօնրա,

— Ամա ահմազլըզ տըր պու պէնիմ քի,
պրոպ ճանըմ, պէօյլէ պօշ վիլիւլէրլէ ինսան
բէք գօլայճա տիվանէ օլուր. պուլնտա պլթ
իւնթ օլաճազ նէ վար. սթասիօնա վասրլ
օլմուշըզ, պաշգա պիր շէյ եօզ. իշթէ սէլա-
մէթտէյիմ:

(Մապաի վար)

ԽՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՈՐՀՐԵԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ (°)

Դ.

«Քու խոսմանցդ մի' դրժեր».

«բայց աս դիւրաւ խօսք մի' ասր»:

«Քու խոսմանցդ մի' դրժեր»

Անիկա որ իր բարի համբաւը կը սիրէ,
կը սիրէ նաեւ ճշգիւ իր խոստումը պահել.
պարկեշտ մարդու յարգը՝ այս պարտքը անոր
վրայ կը դնէ. Երբ կրնայ, անիկա իրեն հա-
մար օրէնք մը կ'ընէ՝ իր խոստումը պահել
նաեւ ամենաթեթեւ բաներու մէջ. քանզի
երբ մարդ կը վարժուի փոքր բաներու մէջ
հաւատարիմ չըլլալու, ընդհուպ մեծ բաներու
մէջ ալ հաւատարիմ պիտի չըլլայ. Տէսքէօ
սովորութիւնն ըրած էր խոստացած պահուն
ճշգիւ գտնուիլ. վասն զի, կ'ըսէր, առաջին
բանը որ մարդուս մտքին կը ներկայանայ և
որուն վրայ յաճախ կը մտածուի, սպասել
սուղ մարդուն թերութիւններն են. Երբ
խոստումը անիրաւ կամ բացարձակապէս ան-
կարելի չէ, ու է պատճառի կամ ու է
շահու համար՝ երբէք անոր դրժելու չէ. Երբ
երկոտասարդ Պոմպէոս Հոկտաւիոսի և Մար-
կոս Անտոնինոսի հետ կայսրութեան համար
կը մաքառէր, իրենց մէջ տեսակ մը զինա-
դադար ըրին, և սկսան իրարու փոփոխակի
խնջոյքներ տալ. Օր մը երբ երկու վերջին-
ները Պոմպէոսի ցովանաւուն մէջ սեղան բազ-
մած էին, իր զօրավարներէն մին զինք մէկ
կողմ առնելով՝ իրեն ըսաւ, որ եթէ իրեն կը
թողուր ուզածն ընել, իսկոն աշխարքիս
միահեծան տէրը պիտի ըլլար. «Ահա յաջող
առիթ մը, ըսաւ, բոլորը քեզի նպաստաւոր
է. եթէ ուզես քառորդ ժամու մէջ այլեւս
թշնամի մը պիտի չունենաս»: Պոմպէոս բացէ
ի բայ մերժեց զայն. Անոնք վստահութեամբ
եկած են, ըսաւ, եւ կը նախադասեմ խոս-

(°) Տես Թիւ 94, էջ 296:

ման հաւատարիմ մնալ քան բոլոր փեղեքաց իշխել։ Այս տեսակ դիւցազնական և աւելի մեծ ու աւելի վեհ գործեր կ'աւանդէ մեզ պատմութիւնը։ Ինչպէս Գաղղիոյ թագաւոր Յովհաննէս Բ. ի մասին։ Ո՛վ կ'անգիտանայ այն ազնիւ զոհը զոր ինքն ըրաւ այս սկզբունքին և զոր իրեն սեփականած էր։ Եթէ նեմարուքիւնը եւ անկեղծութիւնը կորսուած ըլլային, զանոնք քաղաւորաց սրտին եւ բերնին մէջ հաւրկ եր գտնել։ Այս իշխանը, որու հոգին և սիրտը աւելի մեծ էին քան իր արկածները, ճակատամարտի մը մէջ գերի ինկած ըլլալով, իր խօսքին վրայ ետ զրկուեցաւ։ Բայց իրեն ազատութեան համար արուած պայմաններուն ամէնն ալ չկարենալով կատարել, միայն իր առաքինութեան ընկերակցութեամբ Անգլիոյ թագաւորին բանտը վերադարձաւ, և երեք տարի ետքը հոն մեռաւ։ — Փրանկիսկեան Հայր Տրիքորիէր նոյն հաւատարմութիւնը, նոյն քաջութիւնը ցոյց տուաւ և աւելի յաջող ելք մը ունեցաւ։ Բազմաթիւ փորթուկալցի սպաներու հետ հնդիկներու ձեռքը գերի ինկած ըլլալով, խնդրեց որ զինքը ազատ թողուն երթալ գերիներու փոփոխութեան մասին բանակցելու համար։ Եւ որովհետեւ Գամպէի թագաւորը կը կասկածէր թէ գուցէ չվերադառնայ, այդ կրօնաւորը իր մէջքի չուանէ գօտին հանելով՝ զայն անոնց ձեռքը յանձնեց, իբրեւ իր հաւատարմութեան ամենաստոյգ պրակականը։ Այսպէս միայն իրեն թոյլ տրուեցաւ մեկնիլ։ Սակայն իր բանակցութիւնները ապարդիւն մնալով իր բանտին և չղթաներուն վերադարձաւ։ Թագաւորը այս տեսակ հաւատարմութենէն այն աստիճան ազդուեցաւ և այնպիսի մեծ համարում մը ունեցաւ ժողովրդեան մը վրայ որ առաքինութեան այսօրինակ վեհանք գործեր ընելու կարող մարդեր կը հասցնէր, որ ամէն գերիները առանց վերականգնի ազատ արձակեց։ Աւելի մեծ խնամով պահելու է մանաւանդ այն խոստումները, որոնք երգման նուիրական կնիքովը ձօնացած են և Այն որ էապէս ճշմարտութիւն է, երբեմն, նոյն իսկ այս աշխարհիս մէջ զգալի և յայտնի կերպով երդմանդանցը պատժած է։

Եկզեսիաստիկոսի սրբազան հեղինակը կ'ըսէ։ Եւ եթէ զրպարեսցե՛ք՝ յանցանք նորա ի վերայ ինքեան եղիցի...։ Եւ եթէ ընդունայն երդնուցու, այսինքն եթէ չնշին բաներու համար և կամ խոստացածը չկատարելու դատաւորութեամբ ոչ արդարացի (Եկզեսիաստ. ԻԳ. 13—14)։

Արդարութիւնը, որ զմեզ կը պարտաւորէ մեր խոստման հաւատարիմ մնալու, երբ զայն օրինաւորապէս կրնանք ընել, մեզի թոյլ կուտայ և երբեմն նոյն իսկ կը հրամայէ զայն չկատարել, այսպէս վախցնելով խլուած կամ խալդախութեամբ ձեռք բերուած խոստումները։ մարդ չկայ որ, կ'ըսէ Կիկերոն, չհասկընայ թէ կատարելու պարտաւորութիւն չունի։ Գու կեանքդ ազատելու կամ տունդ հրոյ ճարակ ըլլալէ պահպանելու համար, պարագաներէ ստիպուած, աւաղակի մը ըրած խոստումդ երբեք կատարելու պարտաւոր չես։ Իրաւունք ունիս անոնց չտալու ինչ որ ինքը ամենեւին իրաւունք չունէր քեզմէ պահանջելու։ Մէկուն խոստացար փոխ տալ գումար մը որ նոյն իսկ քեզի պէտք կ'ըլլայ հիմա։ սուր մը, որով կ'ուզեն ոճիր մը գործել, ամբարիշտ կամ անպարկեշտ գիրք մը, սիրոյ պատուիրանը քեզի կ'արգելու քու խոստումդ կատարել, երբ կարող ես, առանց զքեզ ցաւալի հետեւութեանց ենթարկելու զանց ընել։

Յոռի գործ մը ընել, ոճիր մը գործել կամ անոր գործակցիլ խոստացա՞ր երբեք, չկարծես երբեք թէ քու այդ խոստումդ կատարելու պարտաւոր ես։ Ատոր գործադրութիւնը զքեզ կրկնակի ոճրագործ պիտի ընէր։ Սպարտացի Ագեսիդայոս թագաւորը իր հպատակաց միոյն թախանձանքներուն տեղի տալով, անոր խոստացած էր բան մի, որու վրայ քիչ մը խորհելէն ետք իրեն արդար չերեցաւ։ Սպարտացին ստիպուած անոր պատասխանեց թէ չէր կրնար անոր խնդիրքը կատարել, վասն զի անիրաւ էր ատիկա։ «Բայց թագաւորները, ըսաւ Սպարտացին, խոստանալու չեն, եթէ ոչ ինչ որ կ'ուզեն կատարել»։ «Հպատակներն ալ, պատասխանեց Ագեսիդայոս, խնդրելու չեն թագաւորներէն, եթէ ոչ ինչ որ կրնան չնորհել»։

Հեթանոսներն ալ այսպէս կը մտածէին : Կաննայի ճակատամարտէն վերջը Աննիրադ տասը պատերազմական գերի զրկած էր Հոմ, վերադառնալու երդմամբ, եթէ չյաջողէին որ Հոմայեցիք հաւանէին գերի ինկած Հոմայեցի զինուորներուն գինը վճարել : Անոնք որ իրենց երգման զրգեցին, համարակալ (Censeur) պաշտօնէից կողմէ աստիճանազուրկ ըլլալով, իրենց ամբողջ կենաց տեւողութեանը համար ժողովրդեան յետին դասակարգին մէջ վտարուեցան :

«Բայց աս դիւրաւ խօսք մի տար» :

Եթէ ուղղամտութիւնը և անկեղծութիւնը մեր խօսքերուն հաւաստիքը պէտք է ըլլան, խոհեմութիւնը և իմաստութիւնը պէտք է որ մեր խոստմանց վարիչն ըլլան : Շատ դիւրաւ խոստումներ ընելը, ո՛չ խոհեմ և ոչ ալ իմաստուն ըլլալ է . անակնկալ հազար ու մէկ պարագաներ կրնան ատոր վրայ գրեղ զղջացնել : Մի՛ խոստանար նաև երբեք առանց անոր առարկան գիտնալու . ապա թէ ոչ յաճախ անհաւատարիմ և կամ ոճրագործ ըլլալու վտանգին պիտի ենթարկես ինքզինքդ : — Հերովդէս, հիացմամբ արբշիռ, Հերովդիապայի աղջկան կը խոստանայ ինչ որ անիկա իրմէն կը փափաքէր ինչորեւ : Անիկա կը ինչորէ բան մը, զոր Հերովդէս չէր կրնար առանց ոճիր մը գործելու շնորհել : Արդէն իր անխոհեմութեան համար յանցաւոր, եւս առաւել յանցաւոր կ'ըլլայ այդ չար ակնածութեան և ամօթոյն համար, որ զայն կ'արգելու իր խոստումը ետ առնել, և, թէպէտ ակամայ, հրաման կու տայ գլխատել Ս. Յովհաննէս Մարգարէն, զոր ինք՝ իրեն վրաստահութեան և համարման արժանի կը համարէր : Խոստում ընելու մէջ ոչ յախուռն և ոչ ալ շատ արագ ըլլաս : Անոնք որ շատ դիւրաւ կ'ընեն, նոյնպէս ալ դիւրաւ անոր կատարման մէջ կը թերանան : Տո՛ւր ինչ որ խոստացած ես, բայց կարող եղածէդ աւելին մի՛ խոստանար, և միշտ խոստացիր անկէ նուազ, զոր կամք չունիս տալու : Արդար և գեղեցիկ է իր խոստացածները կատարել . իմաստուն և խոհեմ գործ է զանոնք իր կա-

րողութեան վրայ չափելով ընելը . քաղցր և հաճոյական է իր խոստացածէն աւելին տալը : Եթէ քու անդորրութիւնդ կը սիրես, շատ քիչ անգամ խոստացիր քիչ զբաղմունք ունեցող անձանց . եթէ փութով խոստումդ չկարենաս կատարել, յաճախ փորձով պիտի հասկնաս թէ, ո՛րչափ անախորժ բան է խոստում մը ըրած ըլլալ այնպիսի անձանց, որոնք իրենց եղած խոստման վրայ մտածելէն զատ ուրիշ գործ չունին : Խոստացած բանիդ յարգը շատ մի՛ բարձրացներ, և զայն շատ մի՛ գովեր : Այն անձանց երեւակայութիւնը, որոնց գեղեցիկ և կամ արտաքոյ կարգի բան մը կը խոստացուի, կը գերազանցէ յաճախ ինչ որ ապա իրենց կը տրուի . լաւագոյն է որ ընծան՝ ակնկալութիւնէն աւելի վեր քան թէ անկէ վար ըլլայ :

Թարգմ. Ն. Ի. Վ. ԱճէՄԵԱՆ

(Շարունակելի)

ՍՈՒՐԲ ՀԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԻՈՍ Ժ.

(Շար. եւ վերջ)

Եւ մինչ հոգիներու սիրահարին ձայնը աշխարհիս ամէն կողմը կը հնչէր, Աւետարանին քաղցրութեամբ, բարութեամբ և բանաստեղծութեամբ տոգորուած ուրիշ մէկ խօսքը, ընդհանուր Հովուին բերնով, կը տարածուէր բովանդակ կաթողիկէ աշխարհի մէջ : Թո՛ղ տու մանկւոյդ գալ առ իս :

Quam singulari վճիռը լրացուց Sacra Tridentina Synodus :

Սկիզբը՝ քիչ մը ամբոխում տեղի ունեցաւ, մանաւանդ այն կողմերը ուր դարերէ ի վեր Լատերանի Ժողովին տղոց մասին տուած որոշումները քիչ մը լայնօրէն մեկնուած էին : Հին սովորոյթներ, որ բանաւոր կը կարծուէին, ընդհարման մէջ կը գտնուէին : Միտքերը ամենուրեք հաւասարապէս կազմ և պատրաստ չէին : Ս. Գահին դրած հրահանգին գեղեցկութիւնն ու բեղունութիւնը ըմբռնուլու :

Այս մասին եղած նախապաշարունակները ընա՛ջինջ ըլլալու հետ են : Տակաւ լաւ եւս

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՐ

ՏՕՆԱՅՈՅՑ

Յունիս 22 † Կ/ր. թվ. Ե. — Զկնի Հագեգ. Բրկնդն.

Վարդավառի

23 Բշ. գճ. Ա. or Պահնց »

24 † Գշ. գկ. Բ. or » » Եւ ծնունդ Յվն. Կուպ. ին

25 Դշ. դճ. Գ. or » »

26 Եշ. դկ. Դ. or » »

27 Ուրք. աճ. Ե. or » »

28 Շք. ակ. Տօն Տապանակին

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

(Շար.)

կը հասկցուի, — խօսքս հաւատացեալ ժողովուրդին վրայ է, որովհետեւ կղերք առջի օրէն ամբողջովին հպատակեցաւ Հռոմի հրամաններուն, — Թէ ո՛րքան կարեւոր է որ տրդաք իրենց մատաղ մտքին երախայրիքը Աստուծոյ տան: Երբ բանավարութեան տարիքին հասնի, այն պահուն ուր կը ստանայ, ըստ Զէովմանի, ահարկու կարողութիւնը մահացու մեղք գործելու, պէտք չէ որ սղան անմիջապէս գայ այս հոգիներու Տիրոջ, որ իր մկրտութենէն ի վեր կը բնակէր այդ անմեղութեամբ չըմպատուած սրտին մէջ, և որ կը սպասէր այդ մկրտութեան կնքով զըրոշմուած մարմնին մէջ մտքի առաջին զարթնումին, անոր առաջին ժպիտը, անոր սիրոյն առաջին փթիթը քաղելու համար:

Հին ատենները հաղորդութիւն կը տրուէր նոյն իսկ նորածին տղոց: Մեր ժամանակը պատանեկութեան սեմը կոխողներուն միայն գայն տալու կը համարձակէր: Այս երկու ստուորութիւններէն անշուշտ առաջինը աւելի համեմատ էր Քրիստոսի բարութեան: Եկեղեցին վերջապէս միջին ճամբայ մը կ'որոշէ: Պիտի սպասէ նա որ տղան իրեն տրուած երիցս սուրբ անունը կարենայ որոշակի ճանչնալ: Սակայն պիտի զգուշանայ որ չըլլայ թէ դեւը թագաւորաց թագաւորէն առաջ մտնէ անոր սիրտը:

Այս երկու գլխաւոր վճիռներէն զատ Ս. Բանայայտպետը ըրած է նաեւ շատ մը լրացուցիչ կարգադրութիւններ. Վճիռ՝ Ներողութեան վրայ՝ ամենօրեայ Հաղորդութեան մասին (1906 Փետր. 14): Որոշումներ նկատմամբ տղոց յաճախ Հաղորդութեան, և հաղորդող հիւանդներու ծովէ տնօրինուելուն (1906 Սեպտ. 15 և Դեկտ. 7), և վերջերս Tradita ab antiquis Սահմանադրութիւնը, (1912 Սեպտ. 14), որ արտօնութիւն կու տար հաւատացելոց ընդունելու որ և իցէ ծէսով սրբագործուած Ս. Հաղորդութիւնը, իրենց բարեպաշտութեան զոհացում տալու համար:

Պիտ ժ. Ի ջանքերով Ս. Հաղորդութեան Համաժողովներն ալ մասնաւոր կարեւորութիւն և չընդունելու ստացան, և Անարիւն Զոհին նկատմամբ խանդավառութեան սիրոյ և հաւատքի աշխարհաթուղտ արտայայտութիւններով զղրդեցին ազգերն ու մայրաքաղաքները, Լոնտոն, Մատրիս, Վիեննա, Մօնրէալ, Մալթա ևն.:

Գրեգորի վերադր նետուելէն ետքը այլ եւս վրան խօսող չեղաւ. որովհետեւ համարեցան թէ մէկ քանի օրէն մեռաւ այդ խոր, ազմալից, օձաբնակ անգունդին մէջ, ինչպէս մեռեր էին իրմէ առաջ հոն նետուած մահապարաները:

Սակայն Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբն ու հրաշքովը Գրեգոր կենդանի մնաց այդ գուրնի մէջ տաններեք, տասնուչորս տարիէն աւելի. և այդ ամբողջ միջոցին՝ իր պահապան հրեշտակը իրեն կ'երեւար ու զինքը կը մխիթարէր, և այլեւ կին մը, որ նոյն Արտաշատի բերդին մէջ կը բնակէր, աեսիլքի մը մէջ առած հրամանին համեմատ, ամէն օր կը տանէր կը ձգէր խոր վերապին մէջ նկանակ մը, որով կը կերակուէր Աստուծոյ հաւատարիմ ծառան:

Տրդատ թագաւորը, Գրեգորը Արտաշատ զրկելէն վերջը, Եկեղեցաց գաւառէն ելաւ գնաց Վաղարշապատ քաղաքը և անկէ հրովարտակ մը հանեց, ուր կը հրամայէր քրիստոնեաները անխնայ սպաննել և միանգամայն կոտց պաշտման մէջ ջերմեանդ ըլլալ:

304ին, Տրդատի թագաւորութեան տասնեւվեցերորդ տարին, Հռոմէն Հայաստան եկան Հաիփոթիական կոյսերը, և նահատակուեցան Տրդատի հրամանաւ Վաղարշապատի մօտերը:

Եւ երբ այս Սրբուհիներուն մարմինները անթաղ, բացօթեայ կը մնային, Տրդատ թագաւորը Աստուծոյ պատու հատուեցաւ: Կոյսերուն նահատակութենէն վեց օր վերջը որսի ելած պահուն, յանկարծ գիւահարեցաւ և կառքէն վար գետին իյնալով՝ սկսաւ ինք իր մարմինը խածտուել. և Նարեկագոյնոսորի պէս գազանացուցիչ ախաւ մը բռնուելով, մարդկային բնակութիւններէն հեռու կը փախչէր և ամոյի տեղեր կը բնակէր, հակառակ ամէն ճիգերու իշխաններուն, որոնք կը ջանային զինքը քաղաքին մէջ արգելափակ պահել: Նոյն միջոցին թագաւորին մարդոցմէն և քաղքին բնակիչներէն շատերն ալ՝ այլ և այլ պատիժներով

կը հարուածուէին և առ հասարակ ամէնքը սուգի ողբի կը մատուցէին:

Այն ատեն թագաւորին Խոսրովդուխտ քրոջ յայտնուեցաւ տեսիլքով թէ այդ հարուածները չեն բուժուիր եթէ Գրիգորը վերադէն չհասնուի: Սկիզբը ոչ ոք հաւատաց այն բանին, բայց երբ տեսիլքը կրկնուեցաւ և երեքկնեցաւ, այն ատեն զրկուեցաւ Օտայ նախարարը, որ Վաղարշապատ գալով Աստուծոյ ծառան կեդանի գտաւ, վեր հանեց գուբէն և անոր սեւցած մարմինը լուալով մաքրելով նոր զգեստ հագցուց և առաւ եկաւ Վաղարշապատ:

Նախարարները քաղքէն գուբն կը սպասէին Գրիգորի: Հարուածեալները զանիկայ տեսնելուն պէս առջևը վազեցին ու սկսան մոլեգնիլ, փրփրիլ: Թագաւորն ալ գեւէն մղուած անոր առջեւը եկաւ մերկ և խայտառակ: Ս. Գրիգոր խկզն ծնրագրեց, աղօթքի կեցաւ. և հարուածեալները զգաստացան այնչափ որչափ պէտք էր իրենց խայտառակութիւնը և սուրբին խօսքերը հասկնալու համար: Սուրբը հրամայեց որ զգեստ հագնին:

Այդ թագաւորն ու նախարարները Ս. Գրիգորի ոտքը ինկան և խնդրեցին որ ներէ իրեն դէմ գործած յանցանքներն: Իսկ Սուրբը զանոնք կանգնեց և իր անոնց պէս խեղճ արարած ըլլալը յայտնելով յորդորեց զանոնք որ ճանչնան երկնի և երկրի արարելը, որ միայն կարող է զիրենք բժշկել: Յետոյ ամէն բանէ առաջ հարցուց Հռիփսիմեան կուսանաց մարմիններուն ուր ըլլալը: Եւ երբ քնաց բազմութեամբ անոնց նըշխարները ամփոփելու, հիացումով տեսան ամէնքը թէ անոնց մարմինները անապական քնացած էին ինը օր ինը գիշեր իրենց նահատակութենէն ի վեր: Թագաւորը և նախարարները պատանքի համար չատ կտաւ և կերպատ բերին, բայց Ս. Գրիգոր զանոնք ընդունելու արժանի չհամարեցաւ, այլ իւրաքանչիւր մարմին անձնիւր պատառատուն զգեստին մէջ ամփոփելով տարաւ այն հնձանը, ուր բնակեր էին կոյսերը: Ինքն ալ այն տեղը աղօթքով անցուց նոյն գիշերը:

Երկրորդ օրը թագաւորը և բազմութիւնը եկան և Ս. Գրիգորի և վկայից Ս. Նշխարներուն առջեւն ինկած, քաւրձ հագած, մոխրի վրայ նստած կուլային կ'ողբային և կը խնդրէին որ Սուրբը իրենց սորվեցնէ ճշմարտութեան ճամբան և զիրենք բժշկէ:

Այնուհետեւ Ս. Գրիգոր ամբողջ վաթսուն և հինգ օր անգափար քարոզեց Փրիստոսի վարդապետութիւնները անթիւ անհամար ժողովրդոց, որ Հայաստանի ամէն կողմերէն իրեն կը գիմէին: Վաթսուն և վեցերորդ օրը պատմեց ամէնուն տեսած սքանչելի տեսիլքը, որուն մէջ հրեշտակը իրեն ցոյց տուած էր Միածին Որդւոյն դէպի Վաղարշապատ հրաշալի եջքը, և միանգամայն չորս սիւն, մին՝ հրեղէն, ոսկեխառնի, ամպախառն, խաչածալ, թագաւորին պալատին մօտերը, միւս երեքը՝ ամպեղէն, կարմրախառնի, հրախոյսկ: Լուսախաչ, երեք այլ և այլ տեղեր՝ ուր նահատակուած էր Ս. Գրիգորն և երկու ընկերով, Ս.

Հռիփսիմէ երեսուն և երկու ընկերով և կոյս մը՝ առանձին:

Ս. Գրիգոր շրջադատ քաշել տուաւ շինուելիք Աստուծոյ տաճարին և երեք վկայարաններուն տեղերը և հոն խաչեր կանգնել տուաւ, որպէս զի ժողովուրդը անոնց շուրջը հաւաքուելով աղօթէ ճշմարիտ Աստուծոյ և կուսքերէն հեռանայ:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ա.—Պ. ԺԱ.—Խաղաղութիւն օսանալու և յառաջդիմութեան եռամիս փրայ:

(Շար.)

Ինչո՞ւ սուրբերէն ոմանք այնչափ կ'օտարեալ ու հայեցողական եղան:

Որովհետեւ շանացին իրենք զիրենք մահացնել ամեն երկրաւոր ցանկութիւններէ և անոր համար կրցան յորով սոթի յարի յիւսուած եւ ազատեան գրադիլ իրենց գործին:

Մենք սաստիկ կը զքաղիմք մեր կրիստոն, եւ ամցաւոր բաներու վրայ մեծապէս կը հոգանք:

Եւ ի՞նչ անգամ կ'օտարեալայկու կը յաղթենք մեկ մոլորութիւնը և հանապազօրեայ յառաջդիմութեան եռամիս փրայ ինչ թորթոյր, անոր համար ցուց ու գաղղ կը մնանք:

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Մարդուս գոյութեան, կեանքին ու գործունէութեան գլխաւոր ազդակը, վայելքն ու վախճանը՝ Սէրն է: Զի կրնար ըլլալ սիրտ մը՝ որքան ալ բարոյապէս վաթառարացած ու անանկացած, որ բան մը չսիրէ. և չի կրնար ըլլալ սիրտ մը որ առանց սիրոյ՝ կեանքէն վայելք մը զգայ:

Սակայն, ինչպէս որ ստորանկեալ մարդը ամէն առաքինութեանց մէջ խանգարում յառաջ բերաւ, նոյնպէս սիրոյ էութիւնը եղծեց և ստորնացուց:

Սէրը որ Աստուծմէ է և բոլոր այնչափ հաղորդակցական, պէտք է փնտռէ առարկայ մը որ գոհացնէ, որ արժանի ըլլայ սիրուելու, որ վսեմացնէ ու երջանկացնէ: Սէրը պէտք է բոցի պէս վեր բարձրանայ, թեւապարէ դէպի երկինք, միացնէ Աստուծոյ: Մեղաւոր մարդը իր սէրը բաժնեց Աստուծմէ, անհատնու մը երջանկութեան անհաղթելիքն. ցրուեց

իր սէրը բեկանուտ ու կորստական արարած-ներու վրայ. մեղաւոր մարդը ստորնացուց, վառնեց, դերի ըրաւ իր սէրը, ծակ ու ջուր չբռնող հորերու դիմեց՝ երջանկանալու համար:

Եւ ահա կրքերու ու ցանկութիւններու հաւաւոր և դժոխային վոհմակներն գրոհ տուին ու ապականութեան մատնեցին մարդկային բնութիւնը, որ՝ ինք իրեն մնացած, կը խար-խափի խաւարի մէջ, կը հեծէ ցաւերու մէջ, կը տանջուի կեղծիքներով, մնամէջ երեւակա-յութեամբ, ողբերգական յուսախարութիւն-ներով, եւ՝ ըստ սրբազան լացատրութեանց, զհողմս կոծէ, ստուերներու ետեւէն կը վազէ, ցնորքներ կ'որոսայ և այնպէս կ'երթայ ու կը կորսուի:

Ս. Գիրքը ըսած է. Մոխիր է անոր սիր-քը ու անարգ հող է անոր մտածումները:

Հսած է դարձեալ. Աստուած երկինքէն նայեցաւ մարդու զաւակներուն վրայ՝ տես-նելու համար թէ արդեօք կա՞յ անոնց մէջ իմասուն մէկը որ զԱստուած փնտռէ: Ապա-կանուեցան ու պղծուեցան. ամենքը խոսո-րեցան, ամենքը մեկտեղ անպիսանացան:

Սակայն բարեգութն Աստուած երբ նայե-ցաւ ու տեսաւ աս անյատակ խեղճութիւնը, երբ ի հեռուստ նշմարեց մարդկային բնու-թեան ցնչոտներով պատած դիակնադէմայդ Անառակը, զթացաւ. և յաւիտենական Հօր Իմաստութիւնը, ծոցածին Մոռնոյը, Բանն Աստուած, ելաւ և անքննելի խորհրդով՝ ըն-թացաւ ընդ առաջ, իջաւ երկինքէն և մար-մին զգեցաւ. Բանն մարմին եղել եւ բնա-կեաց ի մեզ:

Նա ճիշդ մեզի նման մարդ եղաւ, ծառայի կերպարանք զգեցաւ:

Այս ահագին խորհրդոյ, որդւոյն Աստուծոյ Մարդեղութեան չարժանութիւնը ո՞րն էր, վախ-ճանն ի՞նչ էր:

Սէրը:

Ձի այնպէս սիրեց Աստուած աշխարհքը, որ մինչեւ իսկ իր միածին Ուղին տուաւ:

Սիրեց զիս ու ինկզբից մասնեց ինձի հա-մար:

Սիրոյ կրակը երկրի վրայ նետելու համար եկաւ. եւ ո՞րչափ կը տոփէր սիրք մինչեւ

որ բորբոքէր ան, տաւաճուէր, հրդեհէր, այ-րէր:

Աստուած սէր է, եւ Աստուծոյ Հոգին սէր է, որ սփռուած է մեր հոգիներուն մէջ:

Ահա այսպէս անմահն Աստուած գործեց և աւարտեց մարդկային բնութեան վերածը-նունդը:

Սիրոյ ճամբէն շեղած բնութիւնը դրաւ ճշմարիտ Սիրոյ ճամբուն վրայ:

Եւ ինքը, Մարդ և Աստուած, եղաւ ու ղեցոյց Առաջնորդ:

Եւ այս անմահ Սիրոյ գահ, տիպար, նշա-նարան և Առակ-օրինակի և խորհրդանշան (Symbole) ըրաւ Իր սրբազան Սիրտը:

Յիսուսի Ս. Սիրտը Մարդեղութեան կե-դրոնն է:

Ս. Եկեղեցին կ'երկրպագէ Անոր:

Յունիս ամիսը և բոլոր ամիսներուն ա-ռաջին Ուրբաթը նուիրականացած է Ս. Սիր-տը պատուելու համար:

Ս. Սիրտն Յիսուսի՝ երջանկութիւն է մարդուն՝ որ կը ճանչնայ ու կը սիրէ իւր Փրկիչը:

Ուստի մեր թերթն ալ, իր կրօնական հանգամանքով, մերթ ընդ մերթ պիտի խօսի այս ամենաքաղցր, ամենացանկալի, ամենա-մխիթարական, ամենակարեւոր և ամենա-փրկաւէտ ջերմասնուցութեան վրայ:

(Շարունակելի)

ՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՐԲԻՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Կ'ընդունինք հետեւեալ նամակը.

Առ Պատ. Խմբագրութիւն

«Կ. Արձագանգ»ի

Քերտ, 1 Յունիս 1913

Ոչ միայն քրիստոնէական, այլ եւ պար-զապէս մարդկային Բարոյականի անուամբ լրջօրէն քննադատած էիք՝ — Ձեր 91 թի-ւին մէջ, — Վարուժանի Հեքանոս երգեր յորջորջուած գիրքը, որ անպատկառ անբա-րոյութեան և նիւթապաշտ անկրօնութեան դասարան մըն է, այնպիսի մարդու մը կողմէ գրուած որ բանադրելոյ ժողովէն կաթողիկէ

մատաղերամի դաստիարակ և տնօրէն կարգուած է... Ո՛վ դարձ ո՛վ բարձր:

Ձեզի հետ սակայն, ամէն ուղղամիտ, տրամաբան և ընդհանուր բարոյականութեան ու մանկուայ կրօնասէր դաստիարակութեան հոգ տանողները վրդոված են այս տեսակ ամբարիշտ հեղինակութեան մը մասին:

Անցեալները երբ Վարուժանի երկերուն վրայ Ասուլիս մը սարքուեցաւ, էջմիածնական Հայոց կողմանէ, Արմ. էֆ. Բարսեղեան մասնաւոր հրաւիրանօք խօսեր է ճառ մը, յորում տրամաբանօրէն քննադատեր և ի վեր հաներ է Վարուժանի գործոյն անբարոյ և անբարոյացուցիչ կողմերը: Բայց որովհետեւ այս խեղճ Ազգիս մէջ Կուսակցականութիւնն է որ կ'ուզէ տիրել ամէն գնով, մինչեւ իսկ ընկճելով տրամաբանութիւնը. ուստի Ասուլիսը սարքողները՝ այս տեսակ գրական հանգէս մը, որ կատարելապէս անկողմնակալ ըլլալ կը պարտի, իրենց զաշնակցական, կուսակցական յետին մտքերուն ծառայեցնել ուզելով, բանախօսին առարկեր են թէ ինք չի կրնար հասկնալ Վարուժանին գրութեանց բարձրութիւնը !!??... Բայց փիլիսոփայ բանախօսին կորովի ու ջախջախիչ պատասխաններն ու վերլուծումները զիրենք լռութեան դատապարտեր են:

Բայց որքան անկրօն և աղատամիտ, նոյնքան ևս նեղմիտ և իր մտաւորական անկարողութեան զիտակից կուսակցականութիւնը իբր անձնապաշտպանութիւն զիմած է... խաղախութեան !!

Ոստւած ճառերը տպելու սովորութիւնը երբ են եղեր: Այս անգամ Արմ. էֆ. Բարսեղեանի ճառը խաղախե՞ր են:

Ես չեմ զարմանար բնաւ. քանզի անկրօնութիւնը չունի ու չի կրնար ունենալ՝ ո՛չ մկղբունք, ո՛չ ուղղամտութիւն, ո՛չ պարկեշտութիւն. զի աւելորդ ի չարին կայ...

Բայց կուսակցականաց այս կեղծիքներուն իբր նոր ապացոյց մը, ուղեցի Արձագանգի մէջ հրատարակել Արմ. էֆ. Բարսեղեանի բողոքագիրը, զոր նա՝ իրաւամիս գայրացով, հրատարակել թերթերու մէջ, ձաղկելով գործուած անպարկեշտութիւնը:

ԲԵՐՈՒՑԻ

Ահա յիշեալ գրութիւնը՝ Ազատամարտի 1215 թիւէն:

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍՆԵՐՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒՈՂՆԵՐՈՒ ՌԵՍԱՒՐՈՒԹԵԱՆԸ

Սամաթիա, 7 Մայիս

Այսօր միայն պատահութիւնն ունեցայ թերթիւն Գ. Վարուժանի Հեթանոս երգերուն նուիրուած Ասուլիսի տաթիւ հրատարակուած տետրակը և զարմացումով նկատեցի որ իմ խօսածներս, զորս զքի էի աւած կազմակերպողներու կողմէ եղած գիմումի մը համոզման, կրճատուած են, մինչդեռ ուրիշներու բանախօսութիւնները ընդարձակման են ենթարկուած: Կազմակերպողները կրնան նախատրութիւնն ունենալ զէպի այս կամ այն տեսակէտը, սակայն կարծեմ իրենց իրաւունք համարելու չեն խօսածները կրճատելու, երբ մասնաւոր յատկապէս ինքքան են աւելի հրատարակութեան համար: Եթէ կ'ուզեն որոշ ուղղութեամբ տանիլ իրենց սկսած գործը, կրնան միշտ գիմել այնպիսի անկերու, որոնք իրենց հաճելի ձեւով խօսին, որովհետեւ ոչ ոք աւելորդ ժամանակ կամ խօսելացաւ ունի:

Ո՛չ միայն խօսածներս կրճատուած են, այլ և իմ կողմէ մէջ բերուած կտոր մը գրութեան է նախորդ բանախօսին բերանը (Վարուժանի խօսքերը՝ ուղղութեան քննադատներուն) առանց հարկու առուլիսի առան տրուած բացատրութեանց, երբեք ուղեղով կանխապարծիք մը պատրաստել զէպի յաջորդող քննադատական ակնարկները: Իսկ ասիկա առ նուագն անտրեքտիւն է. բոն մը՝ որմէ հեռու պէտք էր ըլլային թէ՛ խօսող և թէ՛ ասուլիսներ կազմակերպողները:

(Մ.մ. Բարսեղեան)

ԳԱԹՕԼԻԲ ՄԵՉԷԳԻ ԼՍԱՍԼԱՐ (*)

(Տեկամի)

Խիւլառե: Ազը սալիմ պիզէ տէյօր քի պիր քիմէ քէնտիսինտէ օրմայանը վէրէմէզ. մէսէլա բարասը օլմայանըն բարա վէրէմէյէ-ճէյի կիպի: Իմտի մատամ քի մատտէնին հաւաքեքի եօզ տըր, հայաքը եօզ տըր, զեհեսաւը եօզ տըր, պինաէն ալէյ, քէնտիսին մահ-րում օրոտըր հարաքէթի, հայաթըր վէքեայը վէրէմէզ: Հայալու քի տիւնեւատա հարաքէթ մէվճուտ տըր, տիրի մախլուգաթ վար տըր, սահիպի իտրաք մէվճուտ վար տըր, էօյլէ իտէ տէմէք տիր քի տիւնեանըն խարիճինտէ պիր

(*) Տեա թիւ 97, էջ 350:

ալի վարըզ վար տըր քի տիւնեայա հա-
րաքի, հայաքը, իսրաքը օ վէրմիշ տիր: Իշ-
թէ պու ալի վարըզա Ալլահ նամը ճէմիլինի
վէրիւրիզ:

Նէթիճէ: Շու տիւնեանըն վար օլմասընա
պիր մանա վէրէպիւմէք իչուն մութլագա
խիլգաք քալիմսըրըն գապուլ իթմէք իճապ
իտէր: չիւնքի եարաքմագ եօգտան վար էթ-
մէք տէմէք, սասէ պիր իսքեմէկէ մէվնու-
սարա վարըզ վէրմէք տէմէք օլուպ, ճէնա-
պը իւալագ, պիր իրատէթի իլահիյէսիյէ
տիւնեայը խալգ էյլէմիշ տիր: Եօգսա, տիւն-
եայը թէշթիլ էյլէյէն մէվնուտաթըն վար օլ-
մասընա պաշգա սուրէթլէ մանա վէրիլէմէ-
յէճէք տիր, չիւնքի տիւնեա միւթէնահի
տիր, մահտուտ տըր, թէհապիլիլ ու թէ-
պէտտիւլաթա մարուզ տըր, պինաէն ալէյ, լազըմ էլ վիճուա պիր վարըզ տէյիլ տիր,
շու հալտէ պիր պաեգասը քարաթընսան վի-
հուս պուլմուե օլտուղընը գապուլ էյլէմէք
գարուրի տիր: Ալլահն ճէվհէրի, մահիյէթի
սաֆ, թագսիմ օլունամաղ, տէյիշէմէզ օլ-
տուղընտան, տիւնեա ծնուն ճէվհէրի իլահի-
պինտէն, մահիյէթի իլահիյէսինտէն նէշէթ
իթմիշ տիր տէ տէնիլէմէյէճէյինտէն, ծնուն
հէր չէյէ գատիր գուտրէթի եէգտանիսի թա-
րաֆընտան խալգ օլունուուշ տըր՝ տէմէքտէն
պաշգա պիր թարիզ գալմաղ. Հաւասամփ ի
վի Ասուաւ, յարաիչն երկնի եւ երկրի տէ-
մէյէ մէճպուր գալըր:

Աքիթմին ցեքայիցի մեհնուսէսի

Աթէիզմ թապիր օլունան տինսիզլիյին նէ-
թայիճի զայէթ մէնհուս տըր. չիւնքի:

1. Էօմրի պէշէր էսնասընտա քէսիր էլ
վուգու օլան ֆէլաքէթ, տէրտ ու միհնէթլէր
իլինտէ ինսանը հէր տիւրլիւ թէսէլլիտէն
մահրում էյլէր:

2. Ատապը ումու միյէյի մանլ իթմէքլէ
ինսանը հէվալը նէֆսանիէյի մէշումէսինէ
թէսլիմ էյլէր:

3. Ճէմիլէթի պէշէրիյէյի իմքեանսըզ գը-
լար:

1. Ինսան ֆէլաքէթ, տէրտ ու միհնէթ
իլինտէ պուլունսըղը վապըթ, ծնուն գալպի
Ալլահ միւհթամ տըր: Պիր թապուլ գար-

շըսընտա, պիր մէշար քէնարընտա ճէնապը
Ալլահտան տահա միւհասիր պիր թէսէլլի եօգ
տըր: Ալլահ եօգ տըր տէնիլէճէք օլուսա,
վալիտէսինի, գէվճինի հախօտ դէվճէսինի
վէ հա ճիկէրքարէսինի աղլայան պիր քիմ-
սէյի նէ՞ իլէ թէսէլլի իտէպիլէճէքսին: Աքե
օլմագ, Ալլահ եօգ տըր տէյէպիլմէք իչիւն,
գալպտէն մահրում օլմագ, հէր տիւրլիւ հիսսի
ինսանիյի զայիպ իթմիշ օլմագ կէրէք տիր:

Ալլահ եօգ տըր տէնիլէճէք օլուսա, ա-
ճէպա ֆագիրլէրին, խասթէլէրին, զաիֆլէ-
րին վէ սաիր ինտէն հաս հագիր կէօրիւլէն
պիլարէլէրին հալի նէ՞ օլաճագ տըր: Ալլահ,
տօսթու օլմայանլարըն հարը սատագաթշիա-
րը, մազլոււլարըն քէնահը, իֆթիրայա գուր-
պան կիթմիշ օլանլարըն ինթիզամ ալըճըր,
ֆուգարանլըն մէտէտրէսի վէ մուլինի տիր:
Ալլահըզ, պու տիւնեա ինսանլարըն տէօրթ-
տէ իւշ գըսմը իչուն ատէթա պիր ճէհէնէմ
հալինի իթթիսա իտէր:

(Մապաշի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Գերմանիոյ Կայսեր և Բրուսիոյ Թագաւորին
Վիլհէլմ Բ. ի գահակալութեան 25րդ տարեգարծին
առթիւ, Ն. Սրբութիւն Պրոս Ժ. շնորհաւորական
ինքնագիր նամակ մը ուղղեց Ն. Վեհափառութեան,
զոր պիտի մատուցանէ Պրեսպալի Եպ. Վսեմ. Կարգ.
Գեւորդ Փօք, որուն պիտի քննեքանայ Գեր. Քրոյթ, որ
Փահանջապետական նամակը բերած է Հռոմէ:

Ն. Գերմանիոս կաթողիկէներէն շատերը սապէս
կը բարեւեն գիրար. Օրհնեալ թլլայ մեր Տէր Յիսուս
Քրիստոս: — Յալիստուս յալիստից. ամէն:

Ս. Հայրը այս ողջնաւարութեան ձեւին հաս-
տատուն Պալուս և տարածուելուն համար, Կոստան-
դինեան յարեւանին առթիւ, նոյնը գործածողներուն
շնորհեց 100 օրուան ներսգութիւն, որ կրնայ մերձեց-
ուիլ նաեւ քաւարանի հոգւոց:

Տ. Կերտի մէջ ևս Կաթողիկէայր գիրար կ'ողջու-
նեն համազօր ձեւով մը. Անուն Յիսուսի փառաւոր-
եալ եղիցի: — Եղիցի՛ եղիցի՛:

Ն. Մայիս 18ին Բարեգի մէջ գումարուեցաւ քնտնե-
եաց հայրերու Կաթողիկէ Ընկերակցութեանց Միւս-
թեան համաժողովը: Հին էր գաւառի Միութեանց
ներկայացուցիչներուն մեծամասնութիւնը:

Միութիւնը ունի 661 Ընկերակցութիւններ, ան-
դամներուն թիւն է 100,000:

Ժերիէ, Ֆրանսայի Կաթողիկէ Երեսմասարդու-
թեան Ընկերակցութեան նախագահը, որանշէրի բա-
նախօսութիւն մը ըրաւ, շնորհաւորեց ընտանեաց հոյ-
րերուն ձեռք բերած յարաճուն յաջողութիւնը, և
քաջակերեց զիրենք որ շարունակեն պայքարիլ ազատ
գաստիարակութեան թշնամիներուն դէմ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Աւագ Թեմի և գաւառի ժողովրդապետներն և
Առաջնորդներն հետզհետէ կը համին բողոքներ ընդ-
դէմ գաստապարտելի ընթացքին վարչական ըսուած
բանադրեալ ժողովին որ կը յաւակնի շրջաբերականներ
և հրահանգներ զրկել իրենց՝ կալուածական խնդրոց
մասին — Իրեւն նմոյշ կը գնենք հետեւեալ հատ-
ուածը համառօտիւ.

«Այս օրերս Պոլսոյ վարչական ըսուած մարդոցմէ
մեծ ծրար մը հասաւ, որուն մէջ շրջաբերական մը և
տաճկերէն քանի մը կտոր թղթեր կային, ու-
րոնցմով ազգային կալուածները ապահովելու հրա-
հանգներ կու տային... Մենք այդպիսի մարդիկ չենք
ճանչնար և կ'ուզենք որ փոխանակ մեզի հրահանգ
տալու՝ իրենք զիրենք հրահանգելու և իրենց հոգեւոր
մեծաւորաց վրայ բռնանալու մարմաջը մարելու աշ-
խատին: Մենք ունինք օրինաւոր մեծաւորներ... եթէ
պետք ըլլայ, կ'առաքեն մեզի կարեւոր հրահանգները.
սպորինաւոր աղբիւրներէ հրահանգի կարօտութիւն
չունինք:

Մայիս 30ին Հինգշաբթի օրը, Պատերազմ.
Նախարարութեան մասնաւոր հրահանգին վրայ, Մահ-
մուտ Եւփէթ փաշայի յուշարկուորութեան ներկայ
գտնուեցաւ, Ամեն Հոգեւոր Տիրոջ կողմանէ, Կ. Պատ-
րիարքական փոխանորդ Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս
Ռոքոսեան, ընկերակցութեամբ Գեր. Խաչիկ վրդպ.
Աթանասեանի, և ցաւակցութիւն յայտնեց կառավա-
րութեան ներկայացուցիչներուն և Ողբացելոյն պարա-
գաներուն:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Նոր դահլիճը կողմնուեցաւ հետեւեալ կերպով:
Սաթի Հալիմ փաշա՝ վարչապետ և Արտաքին գործոց
նախարար. Մէնսէ Էսա Էմ.՝ Եւթիս-իւլ-Իսլամ. Խալիլ
պէյ՝ Պետական Խորհուրդի նախագահ. Թալէաթ պէյ՝
Ներքին գործերու նախարար. Իզզէթ փաշա՝ ծովային
նախարար. Բիժաթ պէյ՝ Ելմասկան. Խալիլ պէյ՝ Էվ-
գաֆի. Օսման Նիզամի փաշա՝ Հանր. Երեսմեանց.
Սիւլէյման Էլ Պոսթանի Էմ.՝ Երկրագործական. Ոսկան
Էմ. Մարտիկեան՝ Թղթատարական — Հեռագրական.
Եիւրի պէյ՝ Կրթական նախարար:

Պոլսոյ անգլ. դեսպան անուանուած է Սըր
Լուի Մալլէթ:

Ողբացեալ Մահմուտ Եւփէթ փաշայի յու-
շարկուորութիւնը տեղի ունեցաւ Յունիս 12ին, հինգ-
շաբթի օր, մեծահանգէս թափօրով: Մարմինը աւ-
փօփուեցաւ Ազատութեան Բլուրին վրայ: Յուշար-
կուորութեան ներկայ էին կայսերական իշխանները,
նորնախոր Եպարքոս, Եւթիս-իւլ-Իսլամը, նախարարնե-
րը, բոլոր դեսպանները՝ իրենց Ա. Թարգմաններով և
զին. կցորդներով, Պատրիարքարաններու ներկայացու-
ցիչները. հեծեալ, հետեւակ, հրէջ, ոստիկան-զին-
ուորներու վաշտեր, օտար մարտնչաւորներ յետեւական
նաւակ՝ իրենց սպաներով, և երկուսն ծովածաւալ
բազմութիւն մը, որ խռնուած էր Տօլմա Պաղչէէն
մինչեւ Ազատութեան բլուրը:

Մահմուտ Եւփէթ փաշայի սպանութեան առ-
թիւ ոստիկանութիւնը ձերականեց հազարաւոր մար-
դիկ, որոնց մէջ են բուն ողբադարձներէն թափալ Թէվ-
ֆիզ, ձէվաւ, Մուսթաֆա, Բէհիւփան Մէհմետ, Բեօր
Էմին, Զիա, Մուհիպ, Քիւպիւմ, Եւփէթ, Մէհմետ Ալի Աս-
կերը և իւր ջինները ապաստանած էին Բերա Սագըզ-Աղաճ,
Բիրէ Մէհմետ փողոց թիւ 4 տունը: Ոստիկանութիւնը
խմանալով պաշարեց նոյն տունը և ստիպեց մէջնները
որ անձնատուր ըլլան. անոնք ընդդիմացան և երկուս-
տեք հրազէնները սկսան որոտալ երկու ժամի շալի
Պորտէն վերաբարուեցաւ Մէհմետ Ալի պէյ և օրմը վերջ
մեռաւ, վերաբարուեցաւ նոյնպէս Մամուէլ պէյ: Ոճ-
րագործները ստիպուեցան անձնատուր ըլլալ երբ զին-
ուորները տան տանիքը ծակելով ներս մտան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	385
Տէր Կոմիտաս Բախանայ	388
Պալք ավր բարբիսի	391
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	392
Ս. Հաղորդութիւնը եւ Պիոս Ժ.	394
Եօթնակ Բիթսոնէի	395
Սուր Սիւր Յիսուսի	396
Վարուճանի գրին վերաբերմամբ	397
Գաթիփ Մէգնէպի Էսալար	398
Տեղեկագրական	399

ԱՐՏՈՆԱՏԵՐ


ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՌՈԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՂԻՋԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքաբաքերի, Բերա, Պալամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս



ԲԱԺԱՆՈՐԴԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիայ համար, արեւելքն՝ 40 դիկ. արծ. վեցամետայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դիկ.:— Արաւսահման՝ ար. ժր. 10. վեցամետ. 5.—Վարմունք կանխիկ են:

ՀԱՍՅԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.— Արձագանգ կը նրաստակուի Շաքար օրեր: 2.— Խմորաբլիթն պարտա-
ւորեալ չէ անպահաւ կամ նշուրեամբ նրաստակել իրեն զբաւած ո եւ ի յօդուած: 3.— Կեղծանունով դրկուած
յօդուածներու հեղինակը կը պարտ իւ իսկական անունը ծանուցանել Խմորագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն
դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան քաղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար միասնաբար պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ
ժեշտ երկու դանկանի նամակագրուի ի միասին դրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Յաւանքս զստ անենայցի հոխ եւ ի վիճակի է
որ եւ իցէ սպառնական գործոց համար: Կը սպուին ամեն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրաւիրագրեր,
խաղեր, փարգատքներ, մանագրներ, եւն., եւն.: Գիները ամբողջիկ կերպով ածան են: Գեղեցկագիտական հա-
շակի եւ սպառնական մաքրութեան կողմանէ յանձնադրները անտարակոյս գոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹ. «Տարական Սկզբունք Բիստոնական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր քղթակազմը 2 դիկն.:
